



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 14952 « 28 08 » 2018 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՔԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) գիտական խորհրդի 2016թ. մայիսի 26-ի թիվ 7/6 որոշմամբ հաստատված «Երևանի պետական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» (այսուհետ՝ ընթացակարգ) 8-րդ կետի պահանջները և ղեկավարվելով ԵՊՀ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ու մ ե մ

1. 2018թ. հոկտեմբերի 4-ին, ընթացակարգի համաձայն, նշանակել և անցկացնել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի մրցութային ընտրություն:

2. ԵՊՀ գիտական քարտուղարին՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչի ընտրության վերաբերյալ հայտարարությունն ընտրությունից առնվազն 30 օր առաջ հրապարակել ԵՊՀ ինտերնետային կայքէջում և պատշաճ կարգով կազմակերպել ամբիոնի վարիչի թեկնածուների առաջադրման վերաբերյալ փաստաթղթերի ընդունման գործընթացը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը, ԵՊՀ գիտական քարտուղարին և ֆակուլտետի ղեկանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ